

Հաշվետվություն

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Ըստ հաստատված ժամանակացույցի 2016 թվականի ընթացքում տեսչական ստուգումներ են իրականացվել ՀՀ բոլոր՝ 10-ը մարզերի մարզպետարանների աշխատակազմերի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչություններում:

Իրականացված ստուգումների արդյունքում (10-ը մարզպետարաններ և 144 համայնքներ) տեսչության կողմից ՀՀ մարզպետներին ներկայացվել է միջնորդություն՝ թվով 87 համայնքների պաշտոնատար անձանց **17900000** դրամ գումարի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Մարզպետների կողմից կայացվել է թվով 29 համայնքների պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ **4600000** դրամ գումարի չափով: Նշանակված վարչական տույժերից 2016թ. պետական բյուջե է մուտքագրվել ընդամենը **2450000** դրամ, որից 2016 թվականին կիրառված վարչական տույժերից գանձվել է **700000** դրամ, իսկ **1750000** դրամը նախորդ տարիներին կիրառված տույժերից:

Արձանագրվել են նաև վարչական պատասխանատվության չհանգեցնող խախտումներ, որոնք վերացնելու համար միջնորդություններ են ներկայացվել ՀՀ մարզպետներին՝ համայնքների ղեկավարներին պարտադիր կատարման ցուցումներ և ժամկետներ տալու մասին:

Տեսչության կողմից իրականացված ստուգումների արդյունքում 2014-2015 թվականների հողերի օգտագործման և պահպանման վերաբերյալ կազմված ակտերը ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազությանը:

Տեսչության կողմից հերթապահ կադաստրային քարտեզների վարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ են իրականացվել կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային, Մարզերի միավորված, Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի, Լոռու, Վայոց Ձորի և Սյունիքի մարզային ստորաբաժանումներում:

2016թ.-ի տեսչական ստուգումների ընթացքում արձանագրված վարչական տուգանքների, տեսչության պետի և մարզպետների կողմից կայացված որոշումների և գանձված գումարների ամփոփ տվյալներ

Հ/Հ	Մարզի անվանումը	Ստուգված համայնքների թիվը	Տեսչության պետի միջնորդագրի		Մարզպետի կողմից կայացված որոշումներով		2016թ.-ի ստուգումներով կիրառված տուգանքներից գանձված գումարի չափը	Նախկինում կիրառված տուգանքներից գանձված գումարի չափը
			Տուգանքի չափը	Համայնքների թիվը	Տուգանքի չափը	Համայնքների թիվը		
1	Արագածոտն	12	1950000	10	1950000	10	0	0
2	Արարատ	21	2150000	13	650000	5	400000	150000
3	Արմավիր	14	2150000	8	0	0	0	0
4	Գեղարքունիք	13	1200000	7	200000	2	200000	0
5	Լոռի	13	2200000	9	0	0	0	0
6	Կոտայք	10	1700000	7	150000	1	0	600000
7	Շիրակ	30	1100000	10	0	0	0	0
8	Սյունիք	5	200000	2	0	0	0	0
9	Տավուշ	11	2200000	11	650000	4	100000	0
10	Վայոց Ձոր	15	3250000	12	1000000	7	0	1000000
	ԸՆԴԱՄԵՆԸ	144	17900000	87	4600000	29	700000	1750000